ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/9152-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-738-01.12.2023-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածի «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմին» ձևակերպումից հետո առաջարկում ենք փակագծերում նշել կրճատ՝ «լիազոր մարմին» տարբերակը, իսկ «մարմինների փոխհարաբերությունները» բառերից հետո՝ «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման» բառերի փոխարեն լրացնել «լիազոր» բառը:

2. Առաջարկում ենք 2-րդ հոդվածի «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման» բառերը հանել, փոխարենը լրացնել «լիազոր» բառը:

3. 5-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության

բնագավառի պետական կառավարման» բառերը, փոխարենը լրացնել «լիազոր» բառը, ինչպես նաև հանել «(այսուհետ՝ լիազոր մարմին)» բառերը՝ քանի որ Նախագծի 1-ին հոդվածում արդեն իսկ նախատեսվում է կիրառել «(այսուհետ՝ լիազոր մարմին)» ձևակերպումը,

բ) 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 21-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետում «տարածքային կառավարման մարմնին» և 2-րդ կետի «բ» ենթակետում «տարածքային լիազոր մարմնին» բառերը փոխարինել «մարզպետին» բառերով՝ հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը:

4. 6-րդ հոդվածով լրացվող 28.1 հոդվածի 2-րդ մասում «սեփականատերերի կողմից» բառերից հետո լրացնել «կամ սույն հոդվածի 1-ին մասի համաձայն» բառերով, ինչը հնարավորություն կտա կառուցապատողի կողմից փաստաթղթեր փոխանցելու պարտականություն ամրագրել ոչ միայն սեփականատերերի, այլ կառուցապատողի կողմից սեփականատերերի անունից ձևավորված կառավարման մարմինների նկատմամբ:

5. 7-րդ հոդվածի վերնագիրը առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածով լրացվող նոր՝ 152.3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «չփոխանցելը» բառից հետո առաջարկում ենք լրացնել «,ինչպես նաև այդ փաստաթղթերի հանձնման - ընդունման ակտի օրինակը օրենքով սահմանված ժամկետում համայնքի ղեկավարին չներկայացնելը» բառերով, նկատի ունենալով, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 28.1 հոդվածի 2-րդ մասով՝ բացի կառուցապատողի կողմից հանձնման-ընդունման ակտով շենքի կառավարման մարմնին փաստաթղթեր հանձնելու պահանջից՝ սահմանված է նաև այդ ակտի օրինակը համայնքի ղեկավարին ներկայացնելու պահանջը:

2. 2-րդ հոդվածի՝

ա) «2-րդ մասում» բառերը փոխարինել «2-րդ պարբերությունում» բառերով,

բ) «152.3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով» բառերը փոխարինել «152.3-րդ հոդվածով» բառերով, հաշվի առնելով, որ նշված հոդվածը բաղկացած է երկու մասից և հոդվածի մասերի առանձին նշման անհրաժեշտությունը բացակայում է:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ